ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 272

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-051-0069-0007 կադաստրային ծածկագրով 0.20848 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների (ըստ գլխավոր հատակագծի բնակավայրերի ընդհանուր օգտագործման հող) հողեր	02-051-0069-0007 կադաստրային ծածկագրով 0.20848 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ նշված «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված պահանջը:

4. Ապարան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Լուսագյուղ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «25» «նոյեմբերի» 2022 թ.